

ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Վաւերագրային աղբիւրների եւ ճշտւած փաստերի վրա հիմնւած ստոյգ պատմագրութիւն չունինք մենք դեռ։ Դրա համար նախապայման է, որ Հայաստանին ու Հայկական Հարցին եւ առհասարակ մեր նոր ու մանաւանդ նորագոյն պատմութեան վերաբերեալ ամէն կարգի վաւերաբուդրեր հրատարակութեան տրւին. մի բան, որ շատ քիչ չափով է կատարւած, դժբախտաբար։ Եղած հրատարակութիւններն էլ մեծ մասով ցրւած են այլ եւ այլ պարբերականների էջերում։ Վերջին տարիները որոշ աշխատանք կատարւում է այնուամենայնիւ, թէ-եւ առանձին հատորներով լոյս տեսած հրատարակութիւններ գրեթէ չկան։

Աւելի մեծ ազգեր իսկ՝ երբեմն յետ են մնում այդ առաջարիդում։ Այսպէս, ոռուերէն լեզով լոյս տեսած վաւերագրային մի նշանաւոր ժողովածուի յառաջաբանում կարդում ենք. «Ըուս գրականութիւնը միշտ էլ ծայր աստիճան աղքատ է եղած միջազգային յարաբերութեանց քաղաքական պատմութեան վերաբերեալ վաւերագրային նիւթերով։ Ոչ միայն ամեննեւին գոյութիւն չեն ունեցել դաշնագիրների ժողովածուներ, ուր ընդգրկւած լինէին բոլոր երկիրների և կամ նըրանց մեծ մասի յարաբերութիւնները յատկապէս նորագոյն ժամանակներում, այլ և չեն եղած ոչ իսկ ամբողջական ժողովածուներ ա'յն դաշնագիրների, որ կնքել է Ռուսաստանը ինքը»։

Այս տողերը կարդում ենք «Նորագոյն ժամանակների միջազգային քաղաքականութիւնը՝ դաշնագիրների, դիւնագիտական յայտագիրների եւ համդիսաւոր յայտարարութիւնների մէջ» վերնագիրը կրող հրատարակութեան յառաջաբանում, ստորագրւած Պրոֆ. Խւ. Վ. Կլիւչնիկովի և Ա. Սարանինի կողմից։

Այս վերջիններիս խմբագրութեամբ լոյս տեսած վերոյիշեալ ժո-

ղովածուն (4 հատոր) բաղկացած է երեք մասից : Առաջինը (Մոսկվա 1925թ.) պարունակում է միջազգային դաշնագիրներ եւ այլ կարգի վաւերաթղթեր՝ «Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնից սկսած՝ մինչեւ համաշխարհային պատերազմ» : Երկրորդ մասը (Մոսկվա 1926թ.) վերաբերում է «Համաշխարհային պատերազմից մինչեւ Խորհրդային Բուռաստանի պաշարման վերացումը» ժամանակամիջոցին : Երրորդ մասը բաղկացած է երկու պրակից եւ ընդդրկում է «Խորհրդային Բուռաստանի պաշարման վերացումից սկսած մինչեւ Հոկտեմբերեան Յեղափոխութեան տասնամեակը» շրջանը :

Երրորդ մասի առաջին պրակը (Մոսկվա 1928թ.) պարունակում է «Խորհրդային դիւանագիրութեան փաստաթղթեր», իսկ երկրորդ պրակը՝ (Մոսկվա 1929թ.) «Օտար պետութեանց դիւանագիրութական փաստաթղթեր» :

Կլիւչնիկովի եւ Սարանինի ժողովածուն կրում է Խորհրդային Միութեան արտաքին գործոց կոմիսարիատի կիսապաշտօնական հըրատարակութեան բնոյթ եւ հանդիսանում է իր տեսակում գրեթէ միակը ոռւս գրականութեան մէջ : Տարիներ առաջ, նոյն այդ կոմիսարիատի հրատարակութեամբ լոյս էր տեսել նման մի ուրիշ գործ՝ «Ժողովածու գործող դաշնագիրների եւ համաձայնագիրների» վերնագրով, բաղկացած երեք պրակից : Ինչպէս վերնագիրն իսկ ցոյց է տալիս, այդ ժողովածուն *) սահմանափակ ծրագիր է առաջադրած եղել իրեն՝ ներկայացնել Խորհ. Միութեան գործող դաշնագիրները միայն (սկզբից մինչեւ 1 յուլիս 1922թ.) :

Շատ աւելի ընդարձակ ծրագիր ունի Կլիւչնիկովի եւ Սարանինի ժողովածուն : Վերջինիս յառաջարանում առւած է, թէ այդ հրատարակութեան մէջ առնւած «նիւթի գրեթէ երկու երրորդը առհասարակ առաջին անգամ է լոյս տեսնում ոռւսերէն լեզով» : Այդ նիւթերը թարգմանել են իրենք՝ Կլիւչնիկով եւ Սարանին : «Իսկ եթէ», շարունակում են նրանք, «մէր տրամադրութեան տակ ունեցել ենք պաշտօնական եւ կամ այլ կարգի պատրաստի թարգմանութիւն, օգտել ենք արդէն գրանից» : Հրատարակութեան մէջ պահւած է ժամանակագրական կարգը, որ, ի հարկէ, ամենից նպաստակայարմարն է :

Զեռքի տակ ունենալով ահա այդ՝ թէ եւ ոչ լիակատար (ինչ մանաւանդ Հայաստանին է վերաբերում) ժողովածուն, մենք «Վէմ»-ի էջերում կը վերաբռագրենք բոլոր այն վաւերաթղթերը, որ վերաբերում են Հայաստանին եւ Հայկական Հարցին : Կարեւորները կը տանք

*) Տես մեր «Դաշնագրեր» յօդւածը «Հայրենիք» ամսագրում, 1923 թ. Մայիս:

ամբողջութեամբ, իսկ միւսները՝ քաղւածօրէն։ Յիշատակութիւն կանենք եւ այն վաւերաթղթերի մասին, որ կողմնակի կերպով միւ-այն առնչութիւն ունեն մեր բուն խնդրի հետ եւ սակայն այս կամ այն կերպ լուսաբանում են այն *): Ժամանակադրական կարգը պահւած է եւ այստեղ։ Իւրաքանչիւր վաւերաթուղթի կցում ենք թւահամարը։ Վաւերագիրների ընդհանուր՝ ամփոփ վերնագիրները մեծ մասով կազմել ենք մենք։ Անկիւնաւոր վակագիծների [] մէջ առնւած բա-ռերը աւելացրած ենք մենք, որպէս լուսաբանութիւն, իսկ կլոր վա-կագիծների () մէջ եղածները վերցւած են բնագրից։



ԹԻՒ 1

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Կայսերական Հրովարտակ

17/29 յունիարի 1801 թ.

[Երկու պարբերութիւնից է բաղկացած այս հրովարտակը։ Ա-ռաջինում ասւած է թէ Վրաց թագաւորութիւնը հնուց ի վեր, նկատի ունենալով իր կրած հալածանքները «այլահաւատ հարեւաններից», ինչպէս եւ ներքին անհամաձայնութիւններ «թագաւորական տան մէջ» եւ ուրիշ վտանգներ՝ խնդրել է «հպատակւել անմիջապէս կայ-սերական գահին»։

Այս հիման վրա եւ, ասւած է երկրորդ պարբերութեան մէջ, Վր-րաստանի թագաւորութիւնը «յաւիտենապէս կցում է ոռւս կայսրու-թեան»]։



ԹԻՒ 2

ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ֆրանս - պարսկական միութեան դաշնագիր՝ կնքւած 4 մայիս 1807 թ. Ֆինկենշտայնի մօտ, Նապոլէոնի բանակատեղում։ Ստորա-գրել են։ Ֆրանսիայի լիազօր՝ Մարէ, Պարսկաստանի լիազօր՝ Ռի-գա - իան։

Յօդ. 2 - [Ֆրանսիան երաշխաւորում է Պարսկաստանի հողի ամ-բողջութիւնը]։

*.) Հմմտ. մեր «Հայեւրուրք վաւերաբղբեր» յօդւածը, «Վէմ», Գիրք ՃԳ. (1936)։

Յօդ. 3.— Ֆրանսիացոց Ն. Կ. Մեծութիւնը ճանաչում է Վրաստանը իրեւ օրինական սեփականութիւն Պարսկաստանի Ն. Կ. Մեծութեան :

Յօդ. 4.— Նա [Փրանս. կայսրը] պարտաւորւում է ամէն ջանք թափել՝ ստիպելու, որ Ռուսաստանը պարպէ Վրաստանը եւ պարսկական հողը :

Յօդ. 8.— Պարսկաստանի Ն. Մ. Կայսրը պարտաւորւում է իր կողմից՝ խզել քաղաքական ու առեւտրական բոլոր յարաբերութիւնները Անդլիայի հետ, անմիջապէս պատերազմ յայտարարել այդ պետութեան եւ անյապաղ պատերազմական գործողութիւններ սկսել:

Յօդ. 9.— Ամէն մի ուրիշ պատերազմի միջոցին, ուր որ Անդլիան եւ Ռուսաստանը միամնաբար հանդէս կը գան Պարսկաստանի եւ Թըրանսիայի դէմ, Ֆրանսիան ու Պարկաստանն եւս նոյն կերպ դուրս պիտի գան նրանց դէմ...

* ԹԻՒ 3

ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Հաշտութեան դաշն Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ՝ կնքած 12 հոկտ. 1813 թ. Գիւլիստանում: Ստորագրել են՝ Ռուսաստանի լիազօր՝ Ռուսիչներ, Պարսկաստանի լիազօր՝ Միրզա - Աբդուլ - Հասան - Խան:

Յօդ. 3.— Նորին Մեծութիւն Շահը... այսու հանդիսաւորապէս ընդունում է, որ Ռուսաստանի Կայսրութեան սեփականութիւն են կազմում Ղարաբաղի եւ Գանձակի խանութիւնները, որոնք ներկայիս վերակազմւած են Ելիզաւետպոլի նահանգ անտան տակ: Այլ եւ Շեքի, Շիրվան, Դերբենտ, Ղուբա, Բագու խանութիւնները, ինչպէս եւ Թալիչի խանութեան այն հողամասերը, որոնք ներկայիս Ռուսաստանի Կայսրութեան իշխանութեան տակ են գտնուում: Նմանապէս ամբողջ Դաղստանը, Վրաստանը՝ Շորագեալի նահանգի հետ միասին, Իմերեթիան, Գուրիան, Մինքրելիան եւ Արքսաղիան, այլ եւ բոլոր այն կալւածներն ու հողերը, որ գտնուում են ներկայիս հաստատած սահմանի ու կովկասեան գծի միջեւ, այս վերջինին ու Կասպից Ծովին յարակից հողերի եւ ժողովուրդների հետ մասին:

* ԹԻՒ 4

ԹՈՒՐԲՄԱՆՉԱՅԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Հաշտութեան դաշն Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ՝

կնքւած 10/22 փետր. 1928 թ. Թուրքմանչայում: Ստորագրել են. Թուսաստանի լիազօրներ՝ Պասկեւիչ եւ Օբրեգլով, Պարսկաստանի լիազօր՝ Աբբաս - Միրզա:

Յօդ. 3.—Ն. Մ. Պարսից Շահը իր եւ իր ժառանդների ու յաջորդների անունով Թուսաստանի կայսրութեանն է զիջում, որպէս կատարեալ սեփականութիւն, Երեւանի խանութիւնը՝ Երասմից այս կողմ եւ այն կողմ, այլ եւ Նախիջեւանի խանութիւնը....:

Յօդ. 5.—Ն. Մ. Պարսից Շահը հանդիսաւորապէս ընդունում է, որ վերոյիշեալ սահմանագծի եւ կովկասեան լեռնաշղթայի ու կապից լճի միջեւ ընկած բոլոր հողերն ու բոլոր կղզիները, ինչպէս եւ այն կողմերը բնակող բոլոր վաշկատուն եւ այլ ժողովուրդների հողերը յաւիտենապէս Թուսաստանի կայսրութեան եւ պատկանում:



ԹԻՒ 5

ԹՈՒՐՔՄԱՆՉԱՅԻ ԱՌԵԽՏՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Թուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ 10/22 փետր. 1828 թ. Թուրքմանչայում. կայացւած առեւտրական յատուկ համաձայնութիւն:

Յօդ. 7.—Թուսաստանի հպատակների միջեւ եղած դատական բոլոր գանդատաներն ու վէճերը ենթակայ են բացառապէս Նորին կայսերական Մեծութեան դեսպանութեան եւ կամ հիւպատոսների քըննութեան ու վճռահատութեան՝ համաձայն Թուսաստանի կայսրութեան օրէնքների եւ սովորութիւնների: Նրանց հայեցողութեան են յանձնուում նմանապէս բոլոր վէճերը եւ գանդատաները Թուսաստանի ու որ եւ է ուրիշ պետութեան հպատակների միջեւ, եթէ կողմերը համաձայն են այդ բանին: Իսկ եթէ վէճեր ու գանդատաներ ծագին Թուսաստանի եւ Պարսկաստանի հպատակների միջեւ, ապա այդ վէճերը եւ գանդատաները ներկայացւում են հաքիմին կամ կառավարիչին. եւ սակայն՝ քննել ու վճռել կարող չեն այլ կերպ, քան դեսպանատան եւ կամ հիւպատոսարանի թարգմանի ներկայութեամբ միայն:

Յօդ. 8.—Թուսաստանի հպատակների միջեւ տեղի ունեցած մարդասպանութիւնները կամ այլ կարգի քրէական յանցագործութիւնները ենթակայ են բացառապէս Թուսաստանի նախարարի, դիւտանագիտական հաւատարմատարի եւ կամ հիւպատոսի քննութեան ու վճռահատութեան՝ համաձայն նրանց վստահւած դատական իշխանութեան՝ իրենց հայրենակիցների մասին: Եթէ Թուսաստանի հպատա-

կը օտարերկրացիների հետ քրէական գործի մէջ խառնւի, ոչ մի կերպ կարելի չէ նրան հետապնդել կամ անհանդստացնել՝ առանց ապացոյցի, թէ մասնակցութիւն է ունեցել յանցագործութեան մէջ, բայց նաև այս, ինչպէս եւ այն դէպքում, երբ Ռուսաստանի հպատակը ամբաստաննելու լինի անմիջական յանցագործութեամբ, տեղական դատական ատեանները չեն կարող այլ կերպ ձեռնարկել քննութեան եւ դատի, քան եթէ Ռուսաստանի դեսպանութեան եւ կամ հիւպատոսութեան կողմից ուղարկւած պաշտօնեայի ներկայութեամբ միայն: Իսկ եթէ յանցագործութեան վայրում չլինի այդպիսին, ապա տեղական իշխանութիւնները պարտաւոր են ամբաստանեալին ուղարկել այնտեղ, ուր կայ Ռուսաստանի հիւպատոս եւ դորժակալ:

Երբ ամբաստանեալի յանցանքը պատշաճ կերպով բացւի եւ դատապարտութիւնը տեղի ունենայ, այդ դէպքում յանցագործը պէտք է յանձնել Նորին Կայսերական Մեծութեան նախարարին, դիւանագիտական հաւատարմատարին կամ հիւպատոսին, որ եւ կուղարկէ նրան Ռուսաստան, կրելու համար օրէնքով սահմանած պատիժը:



ԹԻՒ 6

ԱԴՐԻՍՆԱՊՈԼՍԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Հաշտութեան դաշն Ռուսաստանի եւ Տաճկաստանի միջեւ՝ կնքած 2/14 սեպտ. 1829 թ. Ալդրիխանապոլսում: Սոորագրել են՝ Ռուսաստանի լիազօրներ՝ Դիմիչ - Զարալկանսկի, Օրլով եւ Պալէն, Տաճկաստանի կողմից՝ Մեհմեդ - Սադիկ եւ Աբդուլ - Կադիր - բէյ:

Յօդ. 1. - (Պատերազմի դադարեցումը եւ յաւիտենապէս խաղաղութիւն եւ բարեկամութիւն ու բարի համաձայնութիւն հաստատելը) :

Յօդ. 2. - (Մոլդավիան, Վալաքիան, Ռումելին եւ ռուս զօրքերի գրաւած բոլոր վայրերը Տաճկաստանին վերադարձնելը) :

Յօդ. 3. - Երկու կայսրութեանց սահմանը առաջւան պէս պիտի լինի Պրուս գետը՝ Մոլդավիա մտնելու բուն իսկ վայրից մինչեւ նրա միանալլ Դանուրի հետ:

Յօդ. 4. - Վրաստանը, Իմերեթիան, Մինդրելիան, Գուրիան եւ Անդրկովկասեան շատ ուրիշ մարզեր երկար տարիներից ի վեր արդէն կցւած են յաւիտենապէս Ռուսաստանի Կայսրութեան: Այս պետութեան են զիջւած նաեւ, Պարսկաստանի հետ 1828 թ. փետր. 10-ին կնքած դաշնադրութեամբ, Երևանի ու Նախիջևանի խանութիւնները: Այդ պատճառով և դաշնագիր երկու բարձր կողմերը անհրաժեշտ հա-

մարեցին իրենց կալւածների միջև, յիշատակւած ամբողջ գծի ուղղութեամբ, որուել ճիշտ սահման, որով կարելի լինի ապագային խափանել ամէն տեսակ թիւրիմացութիւն *) :

Յօդ. 5.- (Պահպանումն Մոլդաւիայի եւ Վալաքիայի բոլոր այն իրաւունքների, որ պայմանադրւած են նախորդ դաշնագիրներով եւ տաճկական օրէնքներով) :

Յօդ. 6.- ... Դուռը ամենահանդիսաւոր կերպով պարտաւորւում է անմիջապէս Սերբիային վերագարձնել վեց դաւառները եւ այդ ձեւով առ միշտ ապահովել հանդիստն ու բարօրութիւնը հաւատարիմ ու հնազանդ սերբ ժողովուրդի :

Յօդ. 7.- ... Ռուսաստանի հպատակները, նրանց նաւերը եւ ապրանքները պաշտպանւած պիտի լինեն ամէն կարգի բռնութեանց եւ յաւակնութեանց դէմ : Առաջինները ենթակայ պիտի լինեն բացառապէս Ռուսաստանի նախարարի եւ հիւպատոսների դատական ու ոստիկանական հոկման : Ռուսաստաննեան նաւերը օսմանեան իշխանութեանց կողմից ենթակայ չպիտի լինեն եւ ո'չ մի ներքին վերահսկողութեան — ո'չ բաց ծովի մէջ եւ ոչ էլ Տաճկական կայսրութեան նաւահանդիստներում, նաւակայաններում կամ նաւամատոյցներում :

... Բ. Դուռը ... ընդունում եւ յայտարարում է թէ երթեւեկը Կ Պոլսի ջրանցքով եւ Դարդանէլի նեղուցով բոլորովին ազատ է եւ բաց՝ առեւտրական դրօշ կրող ռուսաստաննեան նաւերի համար ... այլ եւ առեւտրական նաւերի համար այն բոլոր պետութեանց, որոնք Բ. Դրան հետ բարեկամական յարաբերութեան մէջ են ... :



ԹԻՒ 7

ՍԱՆ - ՍՏԵՖԱՆՈՅԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Ռուս - տաճկական հաշտութեան նախադաշնագիր՝ կնքւած 19 փետր. 1878 թ. Սան - Ստեֆանոյում . Ռուսաստանի լիազօրներ՝ իգնատիիւ եւ Նելիդով, Տաճկաստանի լիազօրներ՝ Սալֆետ եւ Սադուլլահ :

*) [Յօդ. 4.-ի սկիզբը ընդհանուր կերպով են միայն յիշատակւած ռուսների հողային գրաւումները Անդրկովկասում եւ Հայատանում : Համաձայն նոյն Յօդ. 4-ի՝ նւանած հողամասերից Ռուսաստանին էին անցնում եւ Ախալցխան ու Ախալքալաքը իրենց շրջաններով (ինչպէս եւ Անապան, Փոքին), իսկ Կարսը, Արդահանը, Զիմ - Բայազիդը, Էրգումբը եւ Տամկահայատանի այլ մասեր վերադարձւում էին Օսմանցիներին] :

Յօդ. 2.— Բ. Դուռը վերջնապէս ճանաչում է Զերնողորիայի անկախութիւնը...

Յօդ. 3.— Սերբիան ճանաչում է անկախ:

[Որոշում են նաեւ նրա սահմանները]:

Յօդ. 5.— Դուռը ճանաչում է Ռումանիայի անկախութիւնը...

Յօդ. 6.— Բոլգարիան կազմում է ինքնավար հարկատու իշխանութիւն, քրիստոնեայ կառավարութեամբ եւ երկրապահ դօրքով...

Յօդ. 16.— Ի նկատի ունենալով այն, որ ոռւս գօրքերի կողմից Հայաստանում գրաւած վայրերը պարպելը եւ Տաճկաստանին վերադարձնելը կարող է առիթ ստեղծել այնտեղ ընդհարումների եւ բարդութիւնների, որոնք եւ [իրենց հերթին] կարող են վնասակար կերպով անդրադառնալ երկու պետութեանց բարի յարաբերութեանց վրա, Բ. Դուռը պարտաւորուում է անյապաղ իրականացնել այն բարելաւումները եւ բարենորոգուումները, որ բխում են հայաբնակ մարդերի տեղական պահանջներից, այլ եւ զերծ պահել հայերին քրդերի եւ չերքէջների վտանգից:

Յօդ. 19.— [Պատերազմական տուգանքի փոխարէն՝] Ռուսաստանի կայսերական կառավարութիւնը, նկատի ունենալով Տաճկաստանի Փինանսական գժւարութիւնները եւ համակերպելով Ն. Մ. Սուլթանի ցանկութեան, համաձայն է, որ նախորդ յօդւածում հաշւած գումարների [պատերազմական տուգանքների] մեծ մասի հատուցումը փոխարինել հետեւեալ հողային զիջումներով. [Ռուսաստանին են անցնում] ... բ) Արդահնը, Կարսը, Բաթումը, Բայզիդը եւ մինչեւ Սողանլուխ տարածւող հողամասը...

§ 24.— Բոսֆորը եւ Դարդանէլը բաց պիտի լինին թէ՛ պատերազմի եւ թէ խաղաղութեան ժամանակ, ոռւս նաւահանդիստներից եկող եւ կամ այնտեղ մեկնող առեւտրական այն նաւերի առաջ, որոնք չէզոք պետութեանց են պատկանում...

Յօդ. 26.— Ռուսաստանի կայսերական զօրքերը որչափի ժամանակ որ մնում են այն վայրերում, որոնք ներկայ դաշնի գօրութեամբ Բ. Դրան պիտի վերադարձեն, այնտեղ գոյութիւն ունեցող վարչաձեւն ու կարգն եւս պիտի մնան գրաւման ժամանակ եղածին պէս անփոփոխ: Բ. Դուռը ոչ մի մասնակցութիւն չպիտի ունենայ վարչութեան մէջ այդ ամբողջ ժամանակամիջոցում, մինչեւ որ ոռւս զօրքերը հեռանան վերջնապէս...

ԹԻՒ 8

ՈՌԻՍԱՍՏԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱ.

Թուս - անգլիական համաձայնութիւն Բերլինի Խորհրդաժողովից առաջ՝ կնքւած 18/30 մայիս 1878 թ. կնոդոնում : Թուսաստանի լիազօր՝ Շուվալով, Մեծն Բրիտանիայի լիազօր՝ Սուլթիւրի:

Յօդ. 7. - Սահ - Ստեֆանոյի նախնական դաշնագրով Հայաստանի մասին արւած խոստումը պէտք չէ որ բացառապէս Թուսաստանին վերաբերի, այլ նաև՝ Անգլիային :

Յօդ. 10. - Ինչ կը վերաբերի Ալաշկերտի հովտին եւ Բայազիդ քաղաքին՝ որովհետեւ այդ հովտը հանդիսանում է տրանզիւտային մեծ ճանապարհ դէպի Պարսկաստան եւ ահազին նշանակութիւն ունի տաճիկների աչքում, ուստի Ն. Մ. Կայսրը համաձայնում է սըրանց [տաճիկներին] վերադարձնել այն : Բայց նա [Թուս. Կայսրը] պահանջեց ու դրա փոխարէն համաձայնութիւն առաւ, որ Պարսկաստանին զիջւի կոթուրի փոքրիկ հողամասը, որ եւ երկու արքունիքների միջնորդ յանձնաժողովները արդար գտան Շահին վերադարձնել :

Յօդ. 11. - [Պարբերութիւն երկրորդ:] Բրիտանիոյ Նորին Մեծ. կառավարութիւնը, համաձայնելով [հանգերձ] վէճի առարկայ չը դարձնել Թուսաստանի Կայսեր ցանկութիւնը՝ ձեռք բերելու Բաթում նաւահանգիստը եւ պահպանելու իր նաւահումները Հայաստանում, իրենից չի ծածկում [այն երկիւղը] թէ ոռւսական սահմանի այդ ընդարձակման հետեւանքով կարող են ապագային հաւանօրէն Ասիայի տաճիկ բնակչութեան հանդստին սպանացող լուրջ վտանգներ ծագել : Ն. Մ. կառավարութիւնը այն կարծիքին է, թէ այդ վտանգից Օսմանեան Կայսրութիւնը պաշտպանելու պարտականութիւնը, որ ընկնում է մասնաւորապէս Անգլիայի վրա, հնարաւոր է իրազործել առանց մի նոր պատերազմի աղէտին ենթարկելու Եւրոպան :

Միենոյն ժամանակ, Թագուհու կառավարութիւնը ի գիտութիւն է առնում Նորին Կայս. Մեծ. կողմից արւած հաւաստիացումներն այն մասին, թէ Թուսաստանի սահմանը ապագային չպիտի ընդարձակւի Ասիական Տաճկաստանի ուղղութեամբ :

(Անգլիայի համաձայնութիւնը՝ վէճի առարկայ չդարձնել Սահ - Ստեֆանոյի դաշնագրի ուրիշ կէտեր, որ չափով որ Թուսաստանը կը պնդէ դրանց պահպանման վրա, Խորհրդաժողովում [Բերլինի] հարկ եղած քննարկումից յետոյ) :

ԹԻՒ 9

ԿԻՊՐՈՍԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Պաշտպանողական դաշն ՄԵԾՆ – Բրիտանիայի եւ Տաճկաստանի միջեւ՝ կնքւած 4 յունիս 1878 թ. կ. Պոլսում։ ՄԵԾՆ Բրիտանիայի լիազօր՝ Լէյարդ, Տաճկաստանի լիազօր՝ Սաւֆետ փաշա։

Յօդ. 1. – Այն դէպքում, եթք Ռուսաստանը իր ձեռքում պահէ Բաթումը, Արտահանը կամ Կարսը եւ կամ այդ վայրերից մէկնումէկը, կամ եթէ Ռուսաստանը փորձ անէ երբեւէ գրաւելու ուրիշ մասն. Մ. Սուլթանի ասիապատկան հողերից՝ որոշած հաշտութեան վերջնական դաշնազրով, Անդլիան պարտաւորւում է միանալ ն. Մ. Սուլթանի հետ, զինու զօրութեամբ պաշտպանելու յիշեալ հողերը։ Դրա փոխարէն՝ ն. Մ. Սուլթանը Անդլիային խոստանում է մատցնել այն անհրաժեշտ բարենորոգումները, որ հետագային կորոշւին երկու պետութեան կողմից և որոնք վերաբերում են վարչութեան պատշաճ կազմակերպութեան ու յիշատակւած հողամասերում ասլրող թ. Դրան քրիստոնեայ եւ այլ հպատակների պաշտպանութեան։ Եւ որպէսզի Անդլիային հնարաւորութիւն տրւի իր պարտականութիւնները կատարելու, ն. Մ. Սուլթանը համաձայնում է, բացի գրանից, Կիպրոս կղզին Անդլիոյ գրաւման եւ կառավարման ձղել։

* *

Լրացուցիչ յօդւածներ 4 յունիս 1878 թ. Համաձայնութեան՝ կնքւած 1 յուլիս 1878 թ. Կոստանդնուպոլսում։

Յօդ. 1. – (Կիպրոս կղզում պիտի մնայ մահմեդական հոգեւոր դատարանը, որ վարելու է միմիայն կրօնական գործեր)։

Յօդ. 6. – Այն դէպքում եթէ Ռուսաստանը վերադարձնելու լինի Տաճկաստանին Կարսը եւ միւս նւաճումները, որ նա արել է Հայաստանում վերջին պատերազմի միջոցին, Կիպրոս կղզին պիտի պարպէտի Անդլիոյ կողմից, [որով] եւ 4 յունիս 1878 թ. Համաձայնութիւնը կորցնում է իր ուժը։

* *

ԹԻՒ 10

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Վաւերագիր 1/13 յուլիս 1878 թ. Բերլինի Խորհրդաժողովի։ Յանուն ամենակարող Աստուծոյ։ Նորին ՄԵԾՆ Խորհրդիւններ . . . ցանկանալով 1856 թ. Փարիզի դաշնազրի որոշումների համաձայն ու եւրոպական վարչակարգի իմաստով վճռել այն խնդիրները, որ ծագել են

Արեւելքում վերջին տարիների պատերազմի դէպքերով ու վերջացել Սան - Ստեֆանոյի նախնական դաշնագրով... [Հետեւեալ լիազօրներին] նշանակեցին. (Ռուսաստան՝ Գորչակով, Շուվալով եւ Ռեբի. Գերմանիա՝ Բիսմարկ, Բիւլով եւ Հոենօլյէ. Աւստրիա՝ Հունգարիա՝ Անդրաշի, Կարոլի եւ Հայմերլի. Ֆրանսիա՝ Վադիմնօտոն, Սէն - Վալիկ եւ Դեպրէ. Մեծն Բրիտանիա՝ Բիկոնսֆիլդ, Սոլըսքիւրի եւ Ռոսսէլ. Իտալիա՝ Կորտի եւ Լոնի. Տաճկաստան՝ Կարաբէոդորի փաշ, Մահմէդ - Ալի փաշա եւ Սադուլլահ բէյ) ...

[Յօդ. 1 - 57 - Վերաբերում են Բոլգարիային, Արեւելեան Ռումելիային, Բոսնիա - Հերցոգովինային, Զերնողորիային, Սերբիային, Ռումանիային եւ այլն] :

Յօդ. 58 - Բ. Դուռը Ռուսաստանի Կայսրութեան է զիջում Ասիայում՝ Արդահանի, Կարսի եւ Բաթումի հողամասերը, վերջինի Բաթումի] նաւահանդստով, այլ եւ այն բոլոր հողամասերը, որ տարածում են ռուս - տաճկական նախկին սահմանի ու հետեւեալ սահմանադաշտին հողաշերտի միջեւ (... Ճորոխ - Բարդուս - Արաքս դիծ) :

Յօդ. 59 - Ն. Մեծ. Ռուսաստանի Կայսրը յայտարարում է, թէ իր մտադրութիւնը՝ Բաթումը դարձնել աղատ - նաւահանդիստ, ըստ նախկինին առեւտրական է :

Յօդ. 60 - Ալաշկերտի հովիտը եւ Բայազիդ քաղաքը, որ Սան - Ստեֆանոյի դաշնագրի 19-րդ յօդածով Ռուսաստանին են զիջւած, վերադարձւում են Տաճկաստանին :

Յօդ. 61 - Բարձր. Դուռը պարտաւորուում է առանց աւելորդ յապաղման իրականացնել այն բարեփոխութիւնները եւ բարենորոգումները, որ ծագել են Հայաբնակ շրջանների տեղական պահանջներից եւ [պարտաւորուում է] երաշխաւորել նրանց [Հայերի] ապահովութիւնը չերքէղների եւ քրդերի դէմ: Այն միջոցների մասին, որ ձեռք պիտի առնէ նա [Բ. Դուռը] այդ նպատակով, պարբերաբար տեղեկացնելու է պետութեանց, որոնք եւ հսկելու են նրանց գործադրութեան վրա:

Յօդ. 62 - Քանի որ Բ. Դուռը հաստատուն մտադրութիւն է յայտնել պաշտպանելու կրօնական աղատութիւն ամենալայն իմաստով, ուստի եւ դաշնագիր կողմերը այդ կամաւոր յայտարարութիւնը առնում են ի տեղեկութիւն:

Օսմանեան Կայսրութեան ոչ մէկ մասի մէջ չէ կարող դաւանական տարբերութիւնը առիթ տալ որ ունէ մէկը զրկւի իրաւունակութիւնից եւ կամ չճանաչւի նրա այդ իրաւունքը բոլոր այն բաներում, ինչ վերաբերում է քաղաքացիական ու քաղաքական իրաւունքներից օգ-

տւելուն, հանրային պաշտօններ ընդունելուն, պաշտօնական գրադրումներին եւ վարձատրութեան եւ կամ այլեւայլ աղատ գրադրումներ եւ արհեստներ ունենալուն...

Յօդ. 63 — 1856թ. 30 մարտ Փարիզի դաշնը եւ 1871թ. 13 մարտ դաշնագիրը պահում են իրենց ուժը բոլոր այն որոշումների սահմանում, որ չեն վերացւած եւ կամ չեն փոխւած վերոյիշեալ յօդ-ւածներով...



Թիկ 11

ՌՈՒՍ — ՏԱԶԿԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՇՆ

Կնքւած 27 յունար (8 փետր.) 1879 թ. Կոստանդնուպոլսում:

Ռուսաստանի լիազօր՝ Լոբանով — Ռոստովսկի. Տաճկաստանի լիազօր՝ Կարաքենդորի փաշա եւ Ալի փաշա:

Յօդ. 2 — Երկու պետութիւնները յայտարարում են համախորհուրդ, թէ եօթը պետութեանց միջեւ գոյացւած Բերլինի դաշնագրի պայմանները ինքնին փոխարինել են Սան — Ստեֆանոյի նախնական դաշնագրի այն յօդւածները, որ վերացւել եւ կամ փոփոխութեան են ենթարկւել [Բերլինի] խորհրդաժողովում...

Բերլին

(Շարունակելի)

